ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

24 օգոստոսի 2022թ.

N 358-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԱՅՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի N 288-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2022 թվականի հուլիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 22-ի N 530-Լ հրամանը ուժը կորցրած ճանաչելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի համակարգման վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 288-Լ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի

8/24/2022

X

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN TIGRAN 2112700065

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«24» օգոստոսի 2022թ. N 358 -Լ հրամանի

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«15» հուլիսի 2022թ. N 288 -Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) բյուջետային գործընթացի համակարգման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Վարչության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրն է բյուջետային գործընթացի շրջանակներում բյուջեների կազմման մասով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախարարությանը վերապահված լիազորությունների՝ իր իրավասությունների շրջանակներում լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը, մասնավորապես՝

1) Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրավորման, ինչպես նաև առաջիկա տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, Վարչությանը վերապահված իրավասության շրջանակներում աշխատանքների իրականացումը.

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մշակման ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և Վարչությանը վերապահված իրավասության շրջանակներում աշխատանքների իրականացումը.

3) բյուջետային գործընթացի կազմակերպման և համակարգման հարցերը կանոնակարգող օրենսդրության մշակումն ու կատարելագործումը.

4) բյուջետային գործընթացի, պետական և համայնքային սեփականության (հանրային ակտիվների՝ բացառությամբ գույքի) կառավարման քաղաքականության մշակման ապահովումը.

5) բյուջեների կազմման նպատակով շուկայական գների ուսումնասիրումը և կողմնորոշիչ գների հրապարակումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառույթներն են՝

1) Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակում առաջիկա տարվա բյուջետային գործընթացի աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, այդ թվում՝ պետական և համայնքների բյուջեների կազմման համար անհրաժեշտ հաշվարկների կատարման մեթոդական ցուցումների և ուղեցույցների, բյուջետային ֆինանսավորման հայտերի, հանրային իշխանության առանձին մարմինների պահպանման ծախսերի նախահաշիվների ձևերի ու դրանք ներկայացնելու կարգերի տրամադրումը պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններին.

2) համագործակցելով Նախարարության այլ ստորաբաժանումների հետ՝ Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծերի ձևավորման բնագավառում Հայաստանի Հանրապետության հանրային իշխանության մարմինների աշխատանքների կատարման ժամանակացույցը սահմանող Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագծի մշակումը.

3) Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակում Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի նախագծի մշակման աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, միջնաժամկետ ծախսերի ծրագրերի նախագծերի ամբողջական փաստաթղթի ամփոփումն ու հաստատման ներկայացումը.

4) Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակում համագործակցելով Նախարարության այլ ստորաբաժանումների հետ, Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշումներից բխող Հայաստանի Հանրապետության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծերի ձևավորման բնագավառում Նախարարության ստորաբաժանումների աշխատանքների կատարման ժամանակացույցը հաստատող Նախարարի հրամանի նախագծի մշակումը.

5) Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակում հանրային իշխանության մարմիններից առաջիկա բյուջետային տարվա բյուջետային ֆինանսավորման

հայտերի ստացումը, դրանց վերլուծությունը, գնահատումը և առաջիկա տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ելքերի ֆինանսական ծրագրավորումը (ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքային ցուցանիշների մասով) և առաջարկությունների ներկայացումը.

6) Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակում առաջիկա տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախնական ցուցանիշների ծրագրավորումը և նշված նախագծի ամբողջական փաստաթղթի ամփոփումն ու ներկայացումը.

7) Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակում առաջիկա տարվա Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի նախնական ցուցանիշների ծրագրավորումը.

8) համագործակցելով Նախարարության այլ ստորաբաժանումների հետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջիկա տարվա բյուջետային ուղերձի կազմման աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և իրականացումը.

9) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի առաջիկա տարվա վարչական ծախսերի նախահաշվի և կապիտալ ներդրումների ծրագրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացության նախագծի մշակման աշխատանքներին մասնակցությունը և նշված նախագծի ամբողջական փաստաթղթի նախապատրաստումն ու ներկայացումը.

10) Հայաստանի Հանրապետության առաջիկա տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և իրականացումը, նշված նախագծի ամբողջական փաստաթղթի ամփոփումը և ներկայացումը.

11) առաջիկա տարվա պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումից բխող Նախարարության ստորաբաժանումների աշխատանքների կատարման ժամանակացույցը հաստատող Նախարարի հրամանի նախագծի մշակումը.

12) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսվող Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից, այլ կենտրոնացված ֆոնդերից Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով իրականացվող հատկացումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված հատկացումների վերաբաշխումների կատարման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

13) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի տրված երաշխավորագրերի սպասարկման նպատակով առաջիկա տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում հատկացումների պահուստավորման նպատակով առաջիկա տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսվելիք Հայաստանի

Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի տարեկան մեծության նվազագույն չափի վերաբերյալ առաջարկությունների մշակումը.

14) տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի գծով սահմանված բյուջետային հատկացումների՝ օրենքով սահմանված չափաքանակների շրջանակներում իրականացվող վերաբաշխումների ծավալների հաշվառումը՝ այդ չափաքանակների գերազանցում թույլ չտալու նկատառումով, իսկ նման ռիսկ առաջանալու դեպքում, ռիսկը վերացնելու ուղղությամբ առաջարկությունների մշակումը.

15) համագործակցելով Նախարարության այլ ստորաբաժանումների հետ՝ հանրային իշխանության մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվող արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման նախահաշիվների ցուցանիշների վերաբերյալ առաջարկությունների մշակումը.

16) Նախարարության դիրքորոշման ձևավորման նպատակով միջազգային կազմակերպությունների, հանրային իշխանության մարմինների, Նախարարության այլ ստորաբաժանումների գրություններում բարձրացվող՝ Վարչության իրավասությանը վերաբերող տարբեր հարցերի, ինչպես նաև ստացված իրավական ակտերի նախագծերի (այդ թվում, ռազմավարական բնույթի փաստաթղթերի) մասին առաջարկությունների մշակումը.

17) Վարչության գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, այլ փաստաթղթերի մշակումը, ինչպես նաև դրանց վերաբերյալ գործընկեր հանրային իշխանության մարմինների հետ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակման ուղղությամբ համագործակցության իրականացումը.

18) Վարչությունը ապահովում է իր գործունեության բնագավառներում միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և Հայաստանի Հանրապետության պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցության համակարգումը.

ա. հանրային իշխանության առանձին մարմինների կողմից ներկայացված բյուջետային հայտերի ուսումնասիրումը, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի, բացառությամբ հարկային եկամուտների, միջնաժամկետ, տարեկան և եռամսյակային ծրագրավորումը, տարեկան և եռամսյակային ծրագրային ցուցանիշների ճշգրտումների հաշվառումը.

բ. ՄԺԾԾ փաստաթղթի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծերի եկամուտների համապատասխան բաժինների, բացատրագրերի, հավելվածների մշակումը, բացառությամբ հարկային եկամուտների.

գ. բյուջետային մուտքերի ելքերի դասակարգման և վերջինիս կիրառման կարգի կատարելագործման աշխատանքներին մասնակցությունը.

19) Վարչությանը վերապահված լիազորությունների շրջանակում բյուջեների կազմման նպատակով գների որոշման ոլորտում շուկայական գների ուսումնասիրումը և կողմնորոշիչ

գների հրապարակումը, իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից, պետական մարմիններից, շինարարական նյութերի, կոնստրուկցիաների, պատրաստվածքների և այլ ապրանքների գների վերաբերյալ գնացուցակների հավաքագրումը, այլ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գների ուսումնասիրման, վերլուծության և դրանց վերաբերյալ առաջարկությունների մշակումը և ներկայացումը.

20) Նախարարության կանոնադրությամբ Վարչությանը վերապահված այլ գործառույթների իրականացումը.

21) վարչությունը ապահովում է Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը, նրա բացակայության դեպքում՝ բաժինների պետերից մեկը՝ վարչության պետի հանձնարարությամբ:

7. Վարչության պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Վարչության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

9. Վարչության պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

10. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Վարչության պետը:

11. Վարչության բաժինների աշխատանքը ղեկավարում և կազմակերպում են բաժինների պետերը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները՝

1) Բյուջետային գործընթացի կազմակերպման և համակարգման բաժին.

2) Բյուջետային գործընթացի վերլուծական մեթոդաբանության բաժին.

3) Հանրային իշխանության առանձին մարմինների գծով բյուջետային ծրագրավորման բաժին:

13. Վարչության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):